

3.5.2. ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությանը առանձնացված հիմնադրամների խմբի 2001թ. դրամական միջոցների մուտքերում անդամավճարները, նվիրատվությունները և այլ անհատույց մուտքերը կազմել են 4833.2 մլն. դրամ կամ հիմնադրամների ընդհանուր մուտքերի 71.1%-ը: Այդ անհատույց մուտքերի 81.4 %-ը ստացվել է արտասահմանից և հիմնադրամների ընդամենը մուտքերում կազմում է 57.9%: Պետական բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից ստացված մուտքերը կազմել են ընդամենը հիմնադրամների մուտքերի 9.6%-ը, իսկ վարկերից և փոխառություններից մուտքերը՝ 6.0%-ը:

Հիմնադրամների դրամական միջոցների ելքերում հաշվեգրված ընթացիկ ծախսերը կազմում են 4721.3 մլն. դրամ կամ ընդամենը հաշվեգրված ելքերի 68.8%-ը (փաստացի ընթացիկ ծախսերը կազմել են 4472.3 մլն դրամ կամ ընդամենը փաստացի ելքերի 68.7%-ը): Ուշագրավ է, որ հաշվեգրված ընթացիկ ծախսերում 69.1% են կազմել այլ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց կատարված վճարումները (փաստացի ելքերում՝ 65.8%), իսկ 22.9%-ը աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները (փաստացի վճարները՝ համապատասխանաբար 21.8%), որի տեսակարար կշիռը ընդամենը հաշվեգրված ելքերում կազմում է 15.0% (համապատասխան փաստացին՝ 15.7%): Ընդամենը հաշվեգրված ելքերում նպաստների և նյութական օգնության (դրամական և բնեղեն արտահայտությամբ) տեսակարար կշիռը կազմել է 7.2%, իսկ փաստացի ելքերում 7.6%: Հատկանշական է նաև, որ այլ գործառնական և ոչ գործառնական ծախսերը կազմել են ընդամենը հաշվեգրված ելքերի 20.3%, իսկ փաստացի ելքերի 20.7%-ը:

Հետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, հետազոտությանը առանձնացված հիմնադրամների խմբի 2001թ. դրամական միջոցների մուտքերը, դրանց փաստացի և հաշվեգրված ելքերն, ըստ առանձին ուղղությունների, բերված են աղյուսակներ 7 և 8-ում:

Հիմնադրամների 2001թ. դրամական մուտքերն, ըստ առանձին ուղղությունների՝
գնահատված հետազոտության արդյունքներով

Ցուցանիշի անվանումը	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ
Անդամավճարներ, հովանավորչական նվիրատվություններ, հունանիտար օգնություն և այլ անհատույց մուտքեր	4 833 281	71.14%
Այդ թվում՝ բնակչությունից	458 730	6.75%
արտասահմանից	3 936 377	57.94%
կազմակերպություններից	438 174	6.45%
Մուտքեր պետական բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից	651 460	9.59%
Մուտքեր ապրանքների, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների վաճառքից	386 763	5.69%
Որից՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից	341 282	5.02%
Այդ թվում՝ Մշակույթի և արվեստի ծառայություններ	77 502	1.14%
Կրթության ծառայություններ	257 250	3.79%
Այլ ծառայություններ	6 530	0.10%
Հիմնական միջոցների վարձակալության դիմաց ստացած եկամուտներ (առանց ԱԱՀ)	160 333	2.36%
Հիմնական միջոցների վաճառքից և վերագնահատումից ստացված եկամուտներ	484	0.01%
Շահաբաժիններ, տոկոսներ և ֆինանսական գործունեությունից եկամուտներ	175 013	2.58%
Այլ գործառնական և ոչ գործառնական եկամուտներ	90 283	1.33%
Վարկեր, փոխառություններ	407 700	6.00%
Այլ մուտքեր	88 593	1.30%
Ընդամենը մուտքեր	6 793 910	100.00%

Հիմնադրամների 2001թ. դրամական ելքերն (փաստացի և հաշվեգրված),
ըստ առանձին ուղղությունների՝ գնահատված հետազոտության արդյունքներով

Ցուցանիշի անվանումը	փաստացի		հաշվեգրված	
	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ
Ընթացիկ ծախսեր, ընդամենը	4 472 271	68.71%	4 721 332	68.84%
Այդ թվում՝ Նյութական ծախսեր	134 889	2.07%	135 546	1.98%
Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ	1 022 375	15.71%	1 029 272	15.01%
Սոցիալական ապահովագրության և ապահովության վճարներ	108 395	1.67%	113 244	1.65%
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ	-	-	218 452	3.19%
Վարձակալության դիմաց կատարված վճարումներ	44 326	0.68%	44 326	0.65%

<i>Ցուցանիշի անվանումը</i>	փաստացի		հաշվեգրված	
	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>	<i>հազ. դրամ</i>	<i>տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ</i>
Վճարումներ այլ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց	3 091 053	47.49%	3 105 178	45.27%
Այլ ընթացիկ ծախսեր	71 232	1.09%	75 314	1.10%
Ներդրումներ, ուղղված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերմանը	114 894	1.77%	114 894	1.68%
Կապիտալ նորոգմանն ուղղված ծախսեր	45 968	0.71%	45 968	0.67%
Նպաստներ և նյութական օգնություն բնեղեն արտահայտությամբ	133 299	2.05%	133 299	1.94%
Նպաստներ և նյութական օգնություն դրամական արտահայտությամբ	363 063	5.58%	362 908	5.29%
Կորուստներ և դուրս գրումներ	0	0.00%	0	0.00%
Պարտքի հիմնական գումարի և վարկերի ու փոխառությունների տոկոսների մարում	32 204	0.49%	85 204	1.24%
Բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում, մուծումներ կանոնադրական կապիտալում և փայտտիրական մուծումներ	0	0.00%	0	0.00%
Այլ գործառնական և ոչ գործառնական ծախսեր	1 346 762	20.69%	1 394 964	20.34%
<i>Ընդամենը ելքեր</i>	<i>6 508 461</i>	<i>100.00%</i>	<i>6 858 569</i>	<i>100.00%</i>